

2453

C. 1930/1385

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵ՛ՔԻ

ՎՐԱՍՏԱՆԻ ՊՐՈԼԵՏ-ԳՐՈՂՆԵՐԻ ԱՍՍՈՑԻԱՑԻԱ

№ 9 ————— ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ ————— № 9

ԳԵՎՈՐԳ ԽԱԼԱԹ

# ԿՈԼԼԵԿՏԻՎԸ

(ՊՈԵՄ)

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТ  
ВОСХОЖДЕНИЯ  
Академии Наук  
СССР



891.99

Խ-17

ԹԻՖԼԻՍ

1929 թ.



06.05.2013

33530

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ  
ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐԱԼԻ  
ԳՐԱԳԻՏԱՆ

# Կ Ո Լ Լ Ե Կ Տ Ի Վ Ը

Ա.

Ա Վ Ա Ն Ը

1.


Բլրի վրա վաղեմի  
լայն թառած,  
վոնց արագիլ, ավան մի  
ծվարած:

2.

Ավանի մեջ  
շուկա մի մեծ,  
վաճառատուն,  
արհեստանոց,  
ութ գինեատուն,  
մի դպրոց:

3.

Ավանում հարբանք, ծեծկոց, բամբասանք  
ու անցած կյանքի անգոր ափսոսանք:



59483-66

Բ.

Վ Ա Ս Ա Ն

1.

Սուրհանդակ եր թուվոան,  
ագիտ-պունկտում վասան մեր.  
Կքած գրքերի վրա  
ադահուլթյամբ կարդում եր:

Ագիտվարչի ցուցմունքով  
արտագրում եր լուրեր նոր,  
փողոցներում խնամքով  
փակցնում նա ամեն որ:

Կիրակի, տոն որերին  
գեղջուկներին հավաքած,  
կարդում եր նա որ-որին  
ղեկրեաներ նոր արձակած:

2.

Կարդում եր նա լրագիր,  
ագիտացիոն բրոշուրներ.  
պարապում եր ուշագիր  
ու չեր քնում գիշերներ:

Նրա պատանի հոգին  
շուտ հասկացավ, թե ինչն  
մեկն ապրում եր, տանջագին,  
մյուսը՝ անդարդ, վոնց թռչուն:

Նա ըմբռնեց, թե ինչն  
ինքն անուսում, խեղճ մնաց,  
խսկ հարևան չաղ չարչու  
տղան բարձրագույն գնաց:

3.

Ու փոթորկվեց մեր վասան,  
գնաց, կոմյերիտ գրվեց.  
աշխատավոր վողջ մասսան  
նրան սիրով գուրգուրեց:

Աշխատանքով իր անդուլ  
շուտով սիրելի դարձավ,  
կոմսոմոլի յեռանդուն  
ակտիվի շարքերն անցավ:

Գ.

# Հ Ո Ղ Ա Ւ Բ Ա Ժ Ա Ն Ը

1.

Ազիտ-պունկտում գյուղացիներ դեղառդեզ...  
Վասան շեշտով բացատրում ե հողային  
դեկրետը նոր... Ու աչքերում, թռչնի պես,  
խինդն ե թառել՝ գոհությունը հանրային:

2.

Շրջհեղկոմը համախմբեց շուրջն իր կուռ  
կուսակցական, կոմյերիտ ու չքավոր,  
հողաբաժանն ընկավ գյուղերն ամենուր...  
Գյուղը հասավ իր մուրազին դարավոր:

Հողից զրկած աշնվականն ավանի  
միաբանած տերտերի ու գորբի հետ,  
դարանակալ վոխ պահեցին մի գաղտնի  
կարմիրներին ջախջախելու առհավետ:

Գ.

# Շ Ա Բ Ա Թ Ն Ո Ր Յ Ա Կ Ը

1.

Լուսաբացին փողը հնչեց զի՛լ ու լնյն:  
Կոմյերիտներ, կոմսոնիստներ ավանի  
քըլունդներով, բահով, կացնով դուրս յեւան,  
հավաքվեցին հրապարակը Լենինի:

2.

Սորդ ու բորդ եր և նեղ ճամփան ջրաղացի,  
սայլակներն ել անցնում եյին խիստ դժվար.  
աղուն, ալյուր առած մեջքին ավանցին,  
չարչարանքով յեղնում եր վեր, իջնում վար:

3.

Սմբի առջև կանգնած Վասան խանդավառ՝  
բռնած ունի ալ դըրոշը գորովով.  
— Պատրաստ, ձայնեց քարտուղարը դեկավար...  
Առաջ շարժվեց խումբը խրոխտ յերգերով:

4.

Ճամբին նրանց միացան  
գյուղացիներ շրջանից

ու ավելի լիաձայն  
հնչեց յերգը խնդալից:

.....

5.

Արեգակի տակ  
քրլունդն է դնգում,  
ծառի հաստ բնին  
կացինը տնքում:

— Հեյ, հայեք, հայեք  
մեր Վասային մեկ.  
լավ ճառել գիտե,  
աշխատել՝ յերբեք:

6.

Հանաքն է շնչում,  
ծիծաղը հնչում:  
Աշխատանք, հանաք...  
ու որն է թռչում:

7.

Յերեկոն փոեց թևերն իր մթին...  
— Շաբաշ, հեյ, շաբաշ, լավում է չորս դին..  
Ու խումբը դադրած տուն վերադարձալ,  
քրլունդով, կացնով, բահերով բարձած:



36.

## ԿՈՄՍՈՄՈԼԸ

1.

Կոմսոմոլն յելել ժամի տանիքին՝  
թիթեղած փայտե գմբեթն է քանդում...  
Խաչը, հնադանդ մոռճերի զարկին,  
նզովք չի շանթում...

2.

...Ու գմբեթն ընկավ շոխնդով հսկա,  
չղջիկն է ծվում:  
«Աստըծու տանը ել աղոթք չկա»,  
պառաջն է նվում...

3.

...Խավարի տունը ակումբ է հիմի,  
ալ լույսն է հաղթում:  
Կոմսոմոլն անվախ տենչած Կոմսոմոնի  
ճամփան է հարթում...

4.

Յեկ յեկեղեցում էլ «սրբեր» չկան,  
«կույս աստվածածինն» ընկած է տրտում,

ու ել չի ծխում խունկն «անապական»,  
աղոթքներն անդ՝ գիտություն, խնդում:

5.

Դաթան, Նինան ու Վարդանը միասին  
յեռանդագին նոր ակումբն են զարդարում.  
բեմի վրա Սաթոն, Վասան ու Մոսին  
փորձ են անում, գերը կոկում անդադրում:

Սեթն ու Շուշոն գրադարակի մոտ կանգնած,  
գիրք են կարդում ու զեկուցում պատրաստում,  
ժիր Անտուշը, պիանինոյին հենած,  
ծնդացնում է, «Ինտերնացիոնալ» սերտում:

Մի անկյունում Վանեն, Սարգոն ու Ճական  
ժիր յուղում են ատրճանակ, հրացան.  
«Պատրաստ յեղեք կոնիսերին ապագա»,  
Լիբկնեխտն, ասես, պատգամում է բարձրաձայն:

9.

## Ա Կ ՈՒ Մ Բ ՈՒ Մ

1.

Գիշեր է աստղոտ ու լուս-լուսընկա...  
Ակումբն է լեցուն ջահել-ահելով...  
Տոմսեր են ուզում, տոմսակ էլ չկա,  
ու հեռանում են, լուս դժգոհելով:

2.

...Բեմի ճակատից Լիբկնեխտն է դիտում,  
Լենինը նայում, խելացի ժպտում...  
Կոմքարտուղարը ժողովն է բացում,  
«Ինտերնացիոնալ»-ն ըմբոստ շառաչում:

3.

Կըրոնի մասին Սեթն է զեկուցում,  
ջահել ու ահել լսում են ուշով...  
«Կըրոնը թույն է, մտքի բթացում,  
հարուստն է իշխում այդ թնայն մշուշով  
ու յերկար դարեր մեզ շահագործում:  
Յե՛լնենք կըրոնի, այդ թույն-մուժի դեմ...  
Կեցցե՛ ստեղծագործ միտքը լուսադեմ»:

ապստամբ իշխան մեծ ՎՊՈ-ով,  
ազնվական ավանի:

4.

— Յերգիր, Մնտուշ, յերգը մեր,  
թող իշխանը հիանա,  
առավոտ վաղ քնաբեր  
մեր այս յերգով լիանա...

5.

— Անվախ ենք, ուժեղ,  
վոճիրն ենք հնձում,  
լենինի լուսեղ  
ուսմունքով ցնծում:

«Մեր յերգը ուումը ե,  
շաչող խարազան,  
թունավոր ումպ ե  
բուրժուասասան»...

— Յելիլ ենք կռիվ  
կապիտալի դեմ  
ու կանենք ցրիվ  
շարքերն հետադեմ...

«Մեր յերգը ուումը ե»...

— Գիտության, ուսման  
ալ ջահն ենք վառել:

«Դեպի կոմունան»  
լողունգին փարել:

«Մեր յերգը ուումը ե»...

6.

...Սըվիններն են շողշողում,  
յերգը հնչում ուղմաշունչ,  
զորբա, իշխան դողդողում  
բարկուժյունից անշըշունջ:

7.

...Արևոտ ե սարահարթը լայնանիստ,  
սըվինաշող վաշտը հոգնած կանգ առավ.  
— Հանգիստ, ձայնից վաշտապետը կոմունիստ  
ու վաշտի հետ ինքն ել ձգվեց բեղարած...

8.

Վաշտը կիսվեց յերկուսի՝  
կարմրի ու ճերմակի,  
հարթավայրը՝ ալ ուժին,  
բլճերն իր վանքով՝ սպիտակին:

9.

...Ու ուղմափորձն ըսկսվեց...  
Հրացաններն են ճարճատում...  
Կարմիրներից տասնվեցն  
անցան թիկունքը գաղտուկ:

...կարմիրներն են դանդաղորեն նահանջում,  
ճերմակները հարվածում են շեշտակի  
ու, յերբ արգեն կարմիրների աջ լանջում  
ճերմակները պիտի տիրեն մի գերջի,  
տասնվեցի գրոհն և թնդում հրճվագին  
ու փոթորկոտ կըրակի տակ խաչմերուկ  
ճերմակները մատնվում են խուճապի  
և պարտըված՝ հանձնըվում են անաղմուկ...

11.

Բլրի վրա ծածանվում և զըրոշն ար,  
ու յերգում են խրոխտ «Ինտերնացիոնալ»...

Ը.

Ա Կ Տ Ի Վ Ի Ս Տ Ը

1.

Ինքնազարգացմամբ յերավ Վասան մեր,  
ԿՅՆՄԻ շրջկոմի դարձավ հրահանգիչ.  
Վոտըով կամ ձիով շրջում եր գյուղեր,  
հրահանգում անխոնջ, կազմում նոր բջիջ:

2.

Աշկերտների մեջ նոր բջիջ կազմեց.  
դասախոսում եր, զեկուցում կարդում,  
ուսուցչի նման թափում յեռանդ մեծ  
ու ԿՅՆՄԻ համար ակտիվ պատրաստում:

3.

Բջիջի որն և... Կցված այն գյուղին,  
վոտըով և զնում ամառվա շոգին,  
բրտնել և ամբողջ՝ յերկար և ուղին...  
Բայց զնում և նա, ուրախ և հոգին:

— Ա՛, բարև, Վասա, դեմն յերան սիրով  
ընկերներն աշխույժ...  
...Վասան պարապեց և դարձավ ձիով  
նա գիշերը ուշ:

99  
483  
66

БИБЛИОТЕКА  
ИИ СТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИИ  
Академии Наук  
СССР



4.

Թղթակցում եր նա հաճախ թերթերին,  
գրում եր մեկ-մեկ նաև հոդվածներ,  
ուշիմ վեր հանում դրականն ու թերին,  
առնում ու տալիս գրչի հարվածներ:

5.

«Ազնվական մի յերկսեռ բազմությամբ  
ընթերցարանը լիքն է լինում միշտ,  
խոսում են բարձր, քրքջում զխոմամբ,  
սեր բացատրվում, ցուցադրում «խոր» վիշտ...»

Ընթերցարանի վարչուհին նույնպես  
ազնվական է, անտարբեր գործին,  
ինքն է նպաստում սիրուն «խելակեղ»,  
ինքն էլ յենթարկվում «սուրբ» սիրո փորձին...

Գեղջուկները մեր չեն կարում մտնել  
ընթերցարանն այդ՝ բունն ազնվական...  
Պետք է այս փաստի պատճառը գտնել,  
ընթերցարանը դարձնել գեղջկական»:

6.

Թղթակցությունն այս ջիղ, արյուն քամեց,  
ազնվականներն ատամներ սրին.  
«Ո՞վ է այդ «Կծու»-ն, փնտռիր «նրանց» մեջ»,  
ու մեր Վասայի վրա մատ դրին:

7.

Թղթակցությունն այս ճիշտ եր պատկերած,  
ու շրջգործկոմը հանեց վաշտուհուն:  
Նրանց մեջ թաքուն նոր վրեժ յեռաց,  
գեղջուկ շարքերում՝ խնդանք մի անհուն:

8.

Ընթերցարանը Շուշուն եր տանում,  
գործերը մեկ-մեկ բերեցին կարգի.  
գեղջուկն է կարդում ու միտքը բանում,  
խրճիթը հիմա սարքին ու հարգի:

Թ.

## ԵԼԵԿՏՐԻՖԻԿԱՑԻԱՆ ԱՎԱՆՈՒՄ

1.

Ելեքտրիկ ուժը ավանն արշավել,  
նավթի ճրրագն ե վառ լույսով վանում.  
հին ջրաղացին հարված ե տվել,  
գեղջուկի ճպոտ աչքերն ե բանում:

2.

Գեղջուկը, հենված իր ձեռնափայտին,  
ուրախ նայում ե անվի պտույտին.  
— Զան, Իվան ախպեր, կուտդ սաղ ըլի,  
վոր մեր մուկ ավանն արիւր լուսալի:

3.

Մատորն հոնգում, Իվանն ե ժպտում,  
ու ձեռքը մեկնում գյուղացուն խնդուն.  
— Տուր ձեռքդ, ընկեր, միաձույլ գործենք,  
վոր հոմմունայի աշխարհն ըստեղծենք:

4.

...Ավանը կորած ե կանաչում,  
հրանք ե՝ հւր այսոր, հւր յերեկ.

կանաչում լույսերն են ճաճանչում,  
հորդահոս լուսալի, վոնց ցերեկ:

Փողոցում լույսերով վողողված  
գրոսնում ե բազմութուն մի յերկսեռ.  
ծառերի ըստվիրում ըսքողված  
ջահեղներն են հնչում յերգ ու ներ:

5.

Յերեկ եր, խրճիթը նավթի լամպ,  
իսկ այսօր... լույսի ծով ե դառել.  
«Ի՞նչ կանենք ելեքտրականությամբ»...  
Շուշոն ե, վոգի յի նա առել:

Լսում ե գեղջուկը, լի՛ գարմանք,  
պատկերում, վոր տունն ե լուսալի.  
«...Ու ելեքտրաղացներ կունենանք,  
շատ բաներ դեռ ելի ու ելի»...

6.

...Կանայք են հավաքվել ահումբում,  
ակումբն ե ծիծաղում լույսերով.  
Կինբաժնից Լիան ե պարապում,  
վարակում նոր կյանքի հույզերով:

7.

Թատրոնը լի՛ լուսին աստղածիր,  
բազմութունն հրճվանքովներս մտավ.  
Լսում են զեկուցումն անձանձիր.  
«Ելեկտրիֆիկացիան լի՛նչ կտա»:

Ժ.

## ԴԱՎԱԴՐԱՆՔԸ

1.

Անաղոթք, անզանգ,  
չղջիկների բուն,  
հինավուրց մի վանք՝  
մենակ վայոզ բու...

2.

Բայց այսօր, մթին,  
շարժում կա վանքում...  
Չար խումբ մի խրթին  
հարցով ե անքուն...

Բանվոր-գյուղացու  
բաբախուն սրտին  
դաշույն են ցցում,  
դաշույն մի ցրտին...

3.

Ու լուսադեմին  
վանքը նորից բու...  
Հաղթ կյանքի շեմին  
գավաղրանքի բուն:

ԺԱ.

## ՏԵՐՐՈՐԸ

1.

Նախագահը շրջգործկոմի՝  
բանվոր կոլյա Ռոնքաձեն,  
աշխատանքում, ասես հոլ մի,  
պտտվում ե ժիր, անձեն:

Հեռախոսով գյուղեր ցանցեյ,  
կառուցեց և հեռագիր,  
ավանի մեջ պարտեզ գցեց,  
դպրոց բացեց լուսակիր:

Ընդարձակեց հին թատրոնի  
շենքը, ընկած անանուն,  
երկտրական նոր կայանի  
հիմքը դրեց ավանում:

Չորբաներից հողեր խլեց,  
բատրակներին բաժանեց...  
Սեղձությունը նրան սիրեց,  
ունկորը խաչ հանեց:

2.

Տոթ մի կեսօր ե. արևն. ե շամփրում...  
Գինետանն իշխան Ինգելն ե նստած,  
ողի յե խմում ու կատղած հարբում,  
կռիվ ե ուզում թեերը քշած:

«Ել հողեր չունենք... Զրադացս ել խլեց»...  
Գազաղ դուրս յերավ նա գինեանից.  
ուղեղում դարան չար միտքը փայլեց.  
«Սպանել ու փախչել ես պետութունից»...

3.

Գրասենյակում գրիչը ձեռին  
աշխատում է Ռոնքաձեն...

Շեմքին... կանգնած է Ինգելին՝  
սևահնած մահ մի անձեն...

— Ե՛յ, դ՛հ... ու արնք... ուղիղ սրտին...  
Կոլյան ընկավ... մահացած...  
Ու Ինգելին... ակընթար՛ին  
պատուհանից ցատկեց ցած...

4.

...Շրջգործկոմում իրարանցում...  
— ՀԵ՛յ, սպանեցին, հմսեք, հմս...  
Շփոթ, սուլոց կն փողոցում...  
— Ի՞նչ կրակոց եր... Պատուհան...

5.

Ամառ եր տոթ, տղերքը գործի.  
միլիցիան են ծայրին,  
ու Ինգելին առանց խոցի  
փախավ խութից դժվարին...

6.

...Աչքերն արյուն՝ ՎՕՄիստները սլացան...  
Ծառս է լինում գժված մայրը Կոլյայի,

այրիացած կինը վողբում խլածայն,  
թե ում պիտի հոգնած գլուխը փայփայի:

Ու նրանց հետ վողջ ավանն է հեծեծում,  
գեղջուկները կատաղել են անսահման.  
— Զենք տվեք մեզ... ու թավ կրծքերն են ձեծում,  
— Այդ լիրբ ցեղին պիտի վերջ տանք անպայման...

7.

Կոմմունարներն այգիները շուռ տվին  
ու չգտան մարդասպանին վոչ մի տեղ...  
Յեվ յերբ հուսատ դառնում էյին... հեվհեվին  
դեմներն յերավ մի գյուղացի շնչահեղձ...

— «Դեղին Հողի» մեծ քարի տակ տեսա յես,  
նա արնոտած թավալվում եր, վորսի պես...  
— Յետ դառնալ, յետ, գոչեց Կոստին ու... դարձան  
կոմմունարներն յերեք խմբով ցիր ու ցան...

8.

— Ա՛յ, նա... ճչաց գունատ Վասան...  
«Նա»-ն կրրակեց, բայց... վրիպեց...  
Վանես, Կոստին վրա հասան...  
Կոստին կրակեց ու խփեց...

— Ո՛խ, շան վորդի... ու թավալվեց,  
յերկար շտկվեց... մահացավ:  
— Ներիր իշխան, Կոստին հեզեց...  
Ու թեթեցած... հեռացան:

ԺԲ.

Թ Ա Ղ Ո Ի Մ Ը

1.

...Ու մի անշուք փոս փորեցին պարտիզում.  
Շարան-շարան գյուղացիներ են զալիս:  
Ավանն, ասես, մղձավանջ մի յերազում,  
անոգնական մղկտում ե ու լալիս...

2.

...Կոմմունարներն են բերում  
դագաղն անզարդ, կարմրածածկ...  
Սնդուսպ զայրույթն ե յեռում  
նրանց աչքերում հուր-հայացք:

3.

— Ընկերներ... Չըկա մեր անխոնջ Կոլյան...  
Բարտուղարն ասաց տխրությամբ մի խոր.  
— Չենք տանի հարվածն այս սուր լռելյայն...  
Պատրաստվենք զալիք կըռիվներին նոր...

— Սիրելի Կոլյա, ընկեր դու անգին,  
գոչեց հուզմունքով Վասան գունաթափ,  
— Կըկվենք համառ, մինչ հաղթանակի  
մեր մեծ իդեան աշխարհում անափ...

4.

...Դագաղն ե իջնում... ձիւ մոր ու կնոջ...  
— Ձարկ մի համազարկ... և ուժգին պայթում...  
Սլ դրոշներն իջան դանդաղ ու դողդոջ...  
Յեկ կոմմունարի յելավ նոր մի թումբ...

ԺԳ.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՈՒՎՆ ԱՎԱՆՈՒՄ

1.

Շըջկոմն ե լեցուն... Յերիտ, կոմմունիստ  
լսում են ուշով: Խոսում ե հանգիստ  
քարտուղարը.— Հն, ունենք տեղեկանք,  
վոր հակաները ցույց են տալիս կյանք...

Յերկրում գործում ե պարիտետ մարմին,  
ապրստամբություն պատրաստում մեր դեմ...  
Կալանենք «մերոնց» տեղում մի առ մի,  
դիրքեր զրավենք մինչև լուսադեմ:

— Ընկեր քարտուղար, փամփուշտներ քիչ են,  
հրացանները մեր մաշված են, հեչ են...

— Բազոյին ղրկենք կինտրոն եղ գործով,  
մենք ել զրաղվենք «վորսալու փորձով»:

2.

— Տղերք, «հարսնիք» կունենանք,  
յեղենք նագան ու թվանք...

Իսկ Սոլոն անձայն գըլուխը քորեց.  
«Լավ չե. եհ, լավ չե», ինքն իրեն խորհեց:

Ու ամեն գիշեր՝  
պահակ դիրքերում,  
ժիր ջանել ու ծեր  
հսկում են, յեռում:

...Նուսադեմին  
բլրի շեմին  
լավեց պայթ մի հրացանի.  
դիրքը շարժվեց  
ու վողջ լարվեց.  
— Կաց, կըրակ մի բաց անի...

...Ու գըրոն մի անգուսպ, հատու...  
հրացանների ճարճատում...  
Արյուն, ճըչոց մեռնող մարդու...  
Նորից նոր գրոն, պայթպայթում...

...Ավանն յելավ  
ու սարսափից կծկվեց... մեռավ...

Մենշերի բանդան ե գրոն տալիս...  
Գնդակներն են վզդում մահերգակ...  
«Սավետի լիրբ նանն ենք մենք լալիս»,  
գոռում են ու գրոհում՝ տրնք-տրնք-տրնք...

— Փամփուշտն ե քիչ, ընկեր Կոստի...  
— Կովով դանդաղ նահանջել,  
մի կերպ պահել դիրքը փոստի  
ու շտնայ փամփուշտ պահանջել...

...Յեվ նահանջում են սրանք սրտնեղած...  
Զայրույթից Ֆանտեն մատներն ե կրծում,  
Մուջիրը փղձկում, անոզ կատաղած,  
խակ Կոստին լուռ ե, սիրան ե կսկծում...

ԺԴ.

Բ Ա Ն Դ Ա Ն

1.

...Ու վաճառական Նիկան իր խմբով  
նեքս ընկավ շրջկոմ կանչով վայրենի  
և ատելության անդուսպ մի թափով  
նկարներն այրեց Մարքսի, Լենինի:

Ու ֆեդերալիստ Սոփրոնն է ձեռնում  
գերի Սոլոյին կոթով նազանի,  
Սոլոն կծկըվում, ճչում է, հեծում  
և աղերսում է՝ իրեն չսպանի...

Շուշոն ու Նինան գցած են բանտում...  
Մենշևիկ Ջուբոն տանջում է նրանց,  
մահով ըսպառնում, շորը պատռում...  
Բայց թեժ մի ապտակ ըստանում անկարծ...

Կոոպիտանություն են կոտորում շխկոցով,  
իրար են բրդում, տանում, հա, տանում...  
Դժվար է անցնել հիմա փողոցով,  
հարբանք ու ձեծկոց, բանդան քեֆ անում:

Ջանգերն են դողանջում ցնծալի,  
էլ իշխան, էլ զորբա, հոգևոր  
իրար են վողջունում հրճվալի...  
Տիկիներն են ճեմում բախտավոր...

Միաինգ են գումարել բազարում,  
մենչևիկ Ալեքն է հա ճառում.  
— Թիֆլիսն ենք գրավել հայրենի,  
դուրս քշել ամբոխը վայրենի...

Ինգլիսն է Բաթումում մեղ ողնում,  
ջարդում ենք թշնամուն, չենք հոգնում...  
Ահա ձեզ բանալին ձեր ժամի,  
աղթեք Ասարծուն դուք հիմի:

— Վաշն, հա, վաշն, ցնծում են, կանչում.  
— Հնդն էլ յեա առնենք, բան չենք պահանջում...



ԺՅԵ.

## Հ Ա Ղ Թ Ա Ն Ա Կ Ը

1.

...Գնդակներն են նորից վզզում անալի,  
Ժիր գնդացիքն աշխույժ շաղում խինդ ու վահ...  
Գեղջուկներն են վտաքի յելել կատաղի.  
«հող են տալիս» զորքաներին անխընա...

2.

...Մենշեկյան բանդան փախավ հետապինդ,  
կոմմունարներն ավանն առան մարտական...  
Ջահեք, անեկ, գյուղացիներ լացախինդ  
դեմներն յելան կարմիրներին հաղթական..

3.

...Նորից ֆուռաց կարմիր դըրոշն ավանում,  
արևի պես խինդը փովեց ամեն հյուղ...  
Աշխատանքն է համառ իր ուղին բանում,  
խրճիթներին տալիս նոր կյանք աներկյուղ:

Վ Ե Ր Զ

1928 թ. Մարտ-Ապրիլ  
Թիֆլիս

32



«Ազգային գրադարան»



NL0348039

33530

Գի՛նը 15 կոպ.

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТ  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

## ԼՈՒՅՍ ՏԵՍԱՆ ՅԵՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

- |                 |                                    |
|-----------------|------------------------------------|
| 1. ԳԵՎՈՐԳ ԳՐԻԳ  | Բանաստեղծություններ                |
| 2. ՄԱՐՏԻՆ       | Պատմվածքներ                        |
| 3. Վ. ՍԻՄՈՆՅԱՆ  | Վերելիքն (բանաստեղծ.)              |
| 4. Մ. ԴԱՐԲԻՆՏԱՆ | Նորը                               |
| 5. ՊԱՅԱԶԱՏ      | «Հողաբեռն»                         |
| 6. ԲԱՆՎՈՐ ԱՄԻՐ  | Աշխարհը շուռ եկավ<br>(պատմվածքներ) |

## ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

- |                  |                     |
|------------------|---------------------|
| 1. ՌՈՒԲ. ԱՂԱԲԱԲ  | «Լիրիկա»            |
| 2. ԱՂ. ՎԱՐԴԱՆՅԱՆ | Դեպի հեզմոնիա       |
| 3. Բանվ. ԿՈՐՅՈՒՆ | Բանաստեղծություններ |
| 4. ՀՌ. ՊՈՂՈՍՅԱՆ  | Բանաստեղծություններ |